

ԿՈՌԱՔՐԱՏԻՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ԳԱՎԱՌՈՒՄ (1921—1925 թթ.)

Կոռուպցիան զուտ սոցիալիստական հասարակարգի ծնունդ չէ: Նա ծնվել է դեռևս բուրժուական հասարակարգում: Սակայն պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ, ինչպես սպառողական, այնպես էլ արտադրական կոռուպցիան իր բնույթով ու խնդիրներով արմատապես տարբերվում է կապիտալիզմի պայմաններում գոյություն ունեցող կոռուպցիայից:

Կոռուպցիայի ամենատարրական ձևը՝ սպառողական կոռուպցիան Հայաստանում ծնունդ է առել դեռևս անցյալ դարի վերջին, երբ 1898 թ. Երևան քաղաքում հիմնադրվեց «էկոնոմիա» առաջին սպառողական ընկերությունը¹: Հետագայում սպառողական բնույթով ընկերություններ են կազմակերպվում նաև Հայաստանի մյուս գավառներում: Սպառողական կոռուպցիայի ցանցը հատկապես ընդլայնվում է Երևանի նահանգում: 1918 թ. հունվարի 1-ի տվյալներով, ամբողջ Հայաստանում գործում էր 266 սպառողական ընկերություն, որից 196-ը միայն Երևանի նահանգում²: 1919 թ. հունիսի 28-ին Երևանի նահանգի «սպառողականության միության» նախաձեռնությամբ գումարվում է նահանգային ընկերությունների միության լիազորների երկրորդ համագումարը, որտեղ և ձևավորվում է Հայաստանի կոռուպցիայի կենտրոնական միությունը՝ «Հայկոոպը»:

Սակայն դաշնակցության տիրապետության հետագա շրջանում Հայկոոպը, ըստ էության, կազմալուծվեց: 1920 թ. վերջում Հայաստանի կոռուպցիայի միությունները ոչ աշխատավորական, վարկունակությունից զուրկ հիմնարկություններ էին՝ դատարկ ու թալանված պահեստներով: Ինչպես ասում են, անունը կար, ամանում չկար: Նորաստեղծ Սովետական Հայաստանի կառավարության առաջին խնդիրներից մեկը եղավ սպառողական կոռուպցիայի վերականգնումը և նրա միջոցով աշխատավորական լայն շերտերի պահանջմունքների բավարարումը: Ռազմական կոմունիզմի պայմաններում սպառողական կոռուպցիան դարձավ պետական ապարատին՝ պարենոցակոմատին ենթակա օրդան, որի հիմնական խնդիրը դարձավ մթերքների բաշխման և մասամբ էլ հայթայթման գործը: Չնայած ռազմական կոմունիզմի քաղաքականության կարճ ժամանակաշրջանին Հայաստանում ևս Հայկոոպը և նրա տեղական մարմինները, որպես պարենոցակոմատի ենթակա բաժիններ, ստանձնեցին մթերքների բաշխման ու մատակարարման ֆունկցիաները:

Նոր տնտեսական քաղաքականության անցնելը նոր խնդիրներ դրեց սպառողական կոռուպցիայի առաջ: Այն այլևս չէր կարող մնալ որպես պետական ապարատի օղակ: Առևտրի ազատության պայմաններում սպառողական կոռուպցիայի գլխավոր խնդիրը դարձավ՝ կուլտուրական առևտուր կազմա-

¹ Վ. Պ. Կարազյան, Սպառողական կոռուպցիայի զարգացումը Հայաստանում, Երևան, 1957, էջ 88:

² «Խորհրդային Հայաստանի հինգ տարին, 1920—1925 թթ.», էջ 255:

կերպելու միջոցով պայքար մղել մասնավոր առևտրականների դեմ և պետական առևտրական կազմակերպությունների հետ միասին առևտրի բնագավառում «ով-ում»-ի հարցը լուծել հոգուտ սոցիալիզմի: Սակայն սպառնալուծությունների ալիք նոր խնդիրները նոր պայմաններում ոչ բոլորն էին բացահայտում:

1921 թ. սկսած, երբ կուսակցությունը ձեռնամուխ եղավ կոոպերատիվ շինարարության վերակառուցման աշխատանքներին, որոշ կուսակցական կազմակերպություններ, չբացահայտելով կոոպերացիայի դերը բանվոր դասակարգի և դուրսագնացիության դաշինքի ամրապնդման գործում, դեմ դուրս եկան կոոպերատիվների վերակառուցմանը: Տնտեսական քաղաքականության այլ խնդիրների հետ միասին սպառնալուծական կոոպերացիայի բնույթի ու խնդիրների հարցը ևս պարծավ կուսակցական լայն դիսկուսիայի առարկա:

Կուսակցության Երևանի կազմակերպությունում կոոպերացիայի հարցը լայն քննարկման առարկա դարձավ մասնավորապես 1922 թ. մայիսի 31-ին՝ շնչ Երևանի կոմիտեի կողմից կազմակերպված «Բանվորական կոոպերացիան Հայաստանում» թեմայով դիսկուսիայի ժամանակ³: Դիսկուսիային մասնակցում էին կուսակցական ու սովետական ղեկավար աշխատողներ ու ակտիվիստներ: Դիսկուսիան ցույց տվեց, որ Հայաստանում ևս շատ կոմունիստներ չէին բացահայտում նոր պայմաններում կոոպերացիայի դերը և նրա աշխատանքների վերակառուցման անհրաժեշտությունը: Տարածված կարծիքներից մեկն այն էր, որ սպառնալուծական կոոպերացիան պետք է մնա որպես պարենոցակոմատի ապարատ և զբաղվի միայն պետությունից ստացած ապրանքների փոխանակությամբ և մթերքների հայթայթմամբ: Այսպիսով, նրանք զրկում էին կոոպերացիային ինքնուրույնությունից և սեփական նախաձեռնությունից, անտեսում էին կոոպերատորների նյութական շահագրգռվածության հանգամանքը, որը, բնականաբար, չէր կարող նպաստել նրանց զարգացմանն ու ծավալմանը: Ինչ վերաբերում է բանվորական կոոպերացիայի դերին սպառնալուծական շինարարության հանուր սխտեմում, ապա ումանք գտնում էին, որ առանձին բանկոոպների կազմակերպման հարկ չկա, իսկ ուրիշները, ընդունելով այդպիսի կոոպերատիվների կազմակերպման անհրաժեշտությունը, գտնում էին, սակայն, որ դրանք պետք է լինեն անկախ և անջատ կոոպերատիվներ՝ կտրված համընդհանուր սպառնալուծականից: Այս տեսակետները սխալ ու վտանգավոր էին այն պարզ պատճառով, որ երկուսն էլ անտեսում էին բանվոր դասակարգի ղեկավար դերը կոոպերատիվ շինարարության մեջ: Ըստ առաջին տեսակետի, բանվորությունը ցրվում էր համընդհանուր կոոպերատիվ սխտեմում, զրկելով նրան բանվորական կորիզից, իսկ ըստ երկրորդի՝ բանկոոպները արհեստականորեն անջատում էին համընդհանուր կոոպերացիայից՝ զրկելով նրանց այդ սխտեմում ունենալիք ղեկավար դերից:

Ն.Պ.-ի պայմաններում, սոցիալիզմի կառուցման գործում, կոոպերացիայի դերի ու խնդիրների մասին բնորոշակ որոշում բնդունեց կուսակցության 12-րդ կոնֆերանսը, որը կայացավ Մոսկվայում 1922 թ. օգոստոսին:

Քննարկելով «Պարտիայի խնդիրները կոոպերացիայում» հարցը, կոնֆերանսը նշեց, որ «ով-ում»-ի հարցը առևտրի բնագավառում հնարավոր է լուծել միայն սպառնալուծական կոոպերացիայի ծավալման և զարգացման միջոցով, որը վրձնական դեր ունի գյուղի և քաղաքի միջև կառարկվող ապրանքաշրջանառությունում:

3 ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4/1, գ. 104, թ. 2:

ներ ծավալելու, բանվոր դասակարգի և գյուղացիության տնտեսական դաշինքը ամրապնդելու դործում: 12-րդ կոնֆերանսի որոշումները լայնորեն քննարկվեցին Երևանի կուսակցական կազմակերպություններում և դարձան նրանց համար գործունեության ուղեցույց:

Կուսակցական ընդհանուր ժողովները միաժամանակ որոշեցին կոոպերատիվ ցանցը մարել անհարազատ տարրերից, նրանցում ընդգրկել հիմնականում շքավոր ու միջակ գյուղացիությանը, մորիլիզացնել և կոոպերատիվ աշխատանքի ուղարկել այդ դործին պիտակ կոմունիստ ընկերներին:

ՀԿԿ Կենտրոնական կոմիտեն, ձեռնամուխ լինելով Հայաստանի կոոպերատիվ ցանցի վերակառուցման աշխատանքներին, 1923 թ. հունվարից լիկվիդացնում է Հայկոոպի շրջանային բոլոր բաժանմունքները և դրանց փոխարեն տեղերում կազմակերպում միասնական յոթ կոոպերատիվներ՝ Երևանում, Ղարաբաղում (Կիրովական), Լենինականում, Էջմիածնում, Ն. Բայազետում (Կամո), Մեղրիում և Դիլիջանում: Լիկվիդացվում են նաև Հայկոոպի և կենտրոնական բանկոոպի միմյանցից անջատ-անջատ գործող ապարատները: Փոխարենը ստեղծվում է մեկ միասնական կենտրոնական ապարատ՝ Հայկոոպի նոր վարչություն, որտեղ ընդգրկվում են բանվորական կոոպերատիվներից՝ Երևք և գյուղկոոպերատիվներից՝ չորս ներկայացուցիչներ:

Վերակառուցվում է նաև բանվորական կոոպերատիվների ստորին ցանցը: Հանրապետությունում ստեղծվում են յոթ բանվորական կոոպերատիվներ՝ Երևանում, Լենինականում, Կիրովականում, Ալավերդում, Դիլիջանում, Ղամարիում (Արտաշատ) և Էջմիածնում: Ինչպես միասնական, այնպես էլ բանվորական կոոպերատիվները ղեկավարվում են մեկ միասնական կենտրոնից՝ Հայկոոպի վարչության կողմից:

Հայաստանի կոոպերատորների առաջին լիազոր համագումարը (1923 թ. մայիս) ավարտում է Հայաստանի սոցալկոոպերացիայի կազմակերպչական ձևավորումը:

Կոոպերատիվ շինարարությունը ծավալելու համար անհրաժեշտ էր պայքարել հիմնականում երեք ուղղությամբ՝ կոոպերատիվ ցանցի մասսայականության, կոոպերատիվների ֆինանսական դրության, վարկունակության կայունացման և կոոպերատիվ առևտրի ծավալման ուղղությամբ:

Գավառի սոցալկոոպերացիայի ցանցում իր ուրույն տեղն ունեն Երևանի բանկոոպը: 1923 թ. հունվարին Երևանի բանկոոպում անդամագրված էին ընդամենը 300 հոգի, դրանք այն անդամներն էին, որոնք դեռևս անդամագրվել էին 1922 թ. ընթացքում: Պայքարելով կոոպերատիվ ցանցի մասսայականության համար, 1923 թ. ընթացքում Երևանի բանկոոպը անդամագրում է ևս 823 հոգի և տարվա վերջում անդամագրվածների ընդհանուր թիվը հասնում է 1228-ի⁴: Ընդլայնվում է նաև բանկոոպի ապրանքային շրջանառությունը: Եթե 1923 թ. հունվարին նա ունեցել է ընդամենը 1773 ռուբլու ապրանքային շրջանառություն, ապա 1923 թ. դեկտեմբերին այն արդեն հասնում է 74787 ռուբլու, իսկ ամբողջ տարվա ապրանքային շրջանառությունը կազմում է 315289 ռուբլի⁵:

4 «Նորհրդային Հայաստան», 1922, № 210.

5 «Նորհրդային Հայաստան», 1924, № 40.

6 Նույն տեղում:

1923 թ. ընթացքում ընդլայնվում է նաև Երևանի գավառի գյուղական սպառնակոտայերատիվների ցանցը: Գավառի վեց շրջաններում կազմակերպվում են 14 գյուղսպառնակոտայերատիվներ, որոնցում ընդգրկվում են 1159 գյուղացիական տնտեսություն⁷:

Այսպիսով, 1923 թ. վերջում գավառի 15 սպառնակոտայերատիվներում անդամագրվածների ընդհանուր թիվը հասնում է 2387 հոգու:

Գյուղական սպառնակոտայերացիան, սակայն, խիստ հտ էր մնում քաղաքայինից: Եվ, իրոք, եթե գյուղական 14 կոոպերատիվներում 1923 թ. վերջում ընդգրկված էին ընդամենը 1159 հոգի, ապա միայն Երևանի բանկոտում անդամագրվածների թիվը հասնում էր 1228 հոգու: 1923 թ. ընթացքում ամբողջ գավառի սպառնակոտայերատիվների ապրանքային շրջանառությունը կազմել է 409023 ռուբլի⁸: Եթե այդ թվից հանենք Երևանի բանկոտի տարեկան ապրանքաշրջանառության գումարը՝ 315289 ռուբլի, ապա կստացվի, որ 14 գյուղական կոոպերատիվներին բաժին է ընկնում ընդամենը 92734 ռուբլի: ՀԿԿ Երևանի գավառային կազմակերպության 5-րդ կոնֆերանսը, որը տեղի ունեցավ Երևանում 1924 թ. մարտի 15—19-ը, սկզբնական կազմակերպություններին հանձնարարում է պայքար ծավալել գյուղական սպառնակոտայերացիայի մասսայականության համար: Կոնֆերանսը աննորմալ է համարում գյուղական սպառնակոտայերատիվներում ընդգրկված բաժնեկիցների ու շաքարների ընդհանուր տոկոսի խիստ ցածր լինելը: Կոոպերացիայի մասին ընդունված որոշման ձեռք նշվում է, որ անհրաժեշտ է ուժեղացնել բանվորական կոոպերացիայի և գյուղական կոոպերատիվների փոխադարձ կապը, գյուղական կոոպերացիայի սօգնելու նպատակով կոնֆերանսը առաջարկում է կազմակերպել կոոպերատորների դասընթացներ, ընդգրկել այնտեղ բանիմաց կոմունիստների և ապա գործուղել շրջանները աշխատելու համար⁹:

Կոոպերատիվ ցանցի ընդարձակումը և նրանում ավելի շատ մասսաներ ընդգրկելը անկասկած խոշոր նվաճում է: Սակայն դրա հետ միասին անհրաժեշտ է ընդարձակել կոոպերատիվ ապրանքաշրջանառությունը, կոոպերատիվ առևտուրը, բնակչությանը մատակարարել ավելի էժան ու ավելի որակով ապրանքներ ու մթերքներ: Մինչդեռ այդ բնագավառում գեղ ամեն ինչ բարվոք չէր: Մասնավոր առևտրականներն ազատորեն մրցում էին կոոպերատիվ և պետական առևտրի հետ և շատ դեպքերում ավելի էժան էին ապրանքներ վաճառում: Այսպես, օրինակ, 1922 թ. անտառակոմը որոշում է բնակչությանը փայտ վաճառել, յուրաքանչյուր սաժենի համար սահմանելով 40 ռուբլի, մինչդեռ նույն քանակությամբ փայտը շուկայում մասնավոր առևտրականները վաճառում էին 32—35 ռուբլով¹⁰:

Ժողտնտիսորհն վաճառահանման է դուրս բերում հեղուկ վառելանյութ: Սակայն գների բարձր լինելու պատճառով, անգամ պետական հիմնարկությունները, գերադասում են վառելիք ձեռք բերել շուկայից՝ մասնավոր առևտրականներից¹¹:

7 ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4/1, գ. 353, թ. 1, 19:

8 «Հայաստանի կոոպերացիա», 1924, № 1, էջ 20:

9 ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4, գ. 353, թ. 21—22:

10 «Խորհրդային Հայաստան», 1922, № 132:

11 Նույն տեղում:

Մասնավոր առևտուրը ազատորեն մրցում էր նաև կոոպերատիվ առևտրի հետ։ Հստ Կենտրոնական վիճագրական վարչության տվյալների, առ 1-ը մայիսի 1923 թ., Երևանի գավառում գործում էին 10 պետական, 8 կոոպերատիվ և 687 մասնավոր խանութներ¹²։ Մասնավոր առևտրականները իրենց ձեռքում էին պահում կատարվող ապրանքաշրջանառության առյուծի բաժինը։ Տեքստիլ սինդիկատի Երևանի գործակալության տվյալներով, 1923 թ. ապրիլից մինչև նույն թվականի դեկտեմբերը մանուֆակտուրային ապրանքների առևտրի 80 տոկոսը գտնվել է մասնավոր անձանց ձեռքում, 14 տոկոսը՝ սպառկոոպերացիայի և միայն 6 տոկոսը՝ պետական օրգանների ձեռքին¹³։

Իրենց ձեռքում կենտրոնացնելով առևտրի զգալի բաժինը, մասնավոր ձեռնարկատերերը շուկայում հանդես էին գալիս գներ թելադրողի դերում և քաղաքի ու գյուղի միջև կատարվող ապրանքաշրջանառության կազմակերպման գործում լուրջ կերպով մրցում էին սոցիալիստական սեկտորի հետ։ Պետական ու կոոպերատիվ ապրանքաշրջանառության ծավալմանը իր հերթին մեծ հարված էին հասցրել ապրանքափոխանակության բնագավառում թույլ տված լուրջ սխալները, մանավանդ արդյունաբերական ապրանքների գների անզուսպ բարձրացումը, որի հետևանքով խիստ կրճատվել էր ապրանքափոխանակությունը քաղաքի և գյուղի միջև։ Այսպես, 1923 թ. դեկտեմբերին Երևանի շուկայում գյուղացին մի փութ ցորենով կարող էր գնել $3\frac{1}{2}$ արշին շիթ, $3\frac{1}{2}$ ֆունտ շաքար, $8\frac{1}{2}$ ֆունտ նավթ, 1 փութ 4 ֆունտ աղ։ Համեմատած 1913—1914 թվականների գների հետ, մի փութ ցորենի դիմաց շիթը թանկացել էր 300 տոկոսով, շաքարը՝ 370, նավթը՝ 480, աղը՝ 370 տոկոսով¹⁴։

Այս Երևույթը համընդհանուր էր և չէր կարող վրիպել կուսակցության տեսադաշտից։ 1923 թ. մայիսին Մոսկվայում գումարվեց կուսակցության 13-րդ համագումարը, որը ժողովրդական տնտեսության արագ վերականգմանը խոչընդոտող երևույթներից մեկը համարեց արդյունաբերական ապրանքների առավել թանկ լինելը գյուղատնտեսականի նկատմամբ։ Գյուղատնտեսությունը, որն ավելի արագ էր վերականգնվել, քան արդյունաբերությունը, խիստ կարիք ուներ և ի վիճակի էր սպառելու վերջինիս կողմից թողարկված ողջ արտադրանքը, բայց ստացվել էր հակառակը։ Արդյունաբերական ապրանքները չէին վաճառվում և տեղի էր ունենում այդ ապրանքների մեծ կուտակումներ։

Ապրանքաշրջանառությունը գյուղի և քաղաքի միջև արգելակվում էր, որը հարվածում էր բանվոր դասակարգի ու գյուղացիության տնտեսական դաշինքին։ Անհրաժեշտ էր միմյանց մոտեցնել մկրատի ծայրերը, իջեցնել արդյունաբերական ապրանքների գները։ Աննորմալ էր նաև այն երևույթը, երբ արդյունաբերությունը գտնվելով պրոլետարիատի ձեռքին, նրա արտադրանքի խոշոր մասը վաճառվում էր գյուղացիներին մասնավոր առևտրականների միջոցով, իսկ իրենց հերթին ավելի էին բարձրացնում արդյունաբերական ապրանքների գները։

1924 թ. հոկտեմբերի 1-ին գումարվում է ՀԿԿ Երևանի գավառային կազմակերպության 6-րդ կոնֆերանսը։ Կոնֆերանսի քննարկմանն է դրվում նաև կոոպերացիայի հարցը։ Կոնֆերանսը լսելով Հայկոպի վարչության նախագահ Նիկոլայ Կուրսելի, Երևանի բանկոոպի վարչության նախագահ Արամ Դաս-

¹² «Խորհրդային Հայաստան», 1924, № 53։

¹³ «Экономический вестник Армении», 1925, № 1(9), стр. 122.

¹⁴ «Մաճկալ», 1923, № 101։

տակյանի և Հայգյուղկոուպի վարչության ներկայացուցիչ Մելիք Փանյանի ղեկուցումները¹⁵, նշեց այն խոշոր նվաճումները, որ ձեռք են բերել գավառի կուսակցական կազմակերպությունները կոոպերատիվ շինարարության բնագավառում 1924 թվականին: 1923 թ. համեմատությամբ, առ 1-ը հոկտեմբերի 1924 թ. գավառի կոոպերատիվ ցանցը խոշոր չափով ընդլայնվել էր: Եթե 1923 թ. վերջում ամբողջ գավառի 15 կոոպերատիվներում ընդգրկված էին 2377 հոգի, ապա 1924 թ. հոկտեմբերին այն հասնում է արդեն 8745-ի, որից 3693-ը բաժին էր ընկնում գյուղական 17 կոոպերատիվներին¹⁶:

Զգալիորեն աճել էր նաև կոոպերատիվների ապրանքային շրջանառությունը: Եթե 1923 թ. այն կազմում էր մոտ կես միլիոն ռուբլի, ապա 1924 թ. 9 ամիսների ընթացքում գավառի սպառկոոպերացիայի ապրանքային շրջանառությունը հասավ մեկ միլիոն 930000 ռուբլու: Կոնֆերանսում բացահայտվեցին նաև կոոպերատիվ շինարարության բնագավառում տեղ գտած թերությունները: Չնայած այն բանին, որ գյուղական սպառկոոպերացիայի ցանցը մեկ տարվա ընթացքում զգալիորեն ընդարձակվել էր, այնուամենայնիվ այն դեռևս խոշոր չափով ետ էր մնում բանվորական կոոպերացիայից՝ թե անդամների ընդհանուր թվով և թե վարկունակությամբ, ապրանքային շրջանառությամբ:

Եթե գյուղկոուպները իրենց 30 խանութներում առ 1-ը հոկտեմբերի 1924 թ. ունեցել են ընդամենը 350000 ռուբլու ապրանքաշրջանառություն, ապա միայն բանկոուպը այդ ժամանակաշրջանում ունեցել է մեկ միլիոն 580000 ռուբլու ապրանքաշրջանառություն¹⁷:

Կոնֆերանսը կոոպերատիվների առջև խնդիր է դնում պետական առևտրական օրգանների հետ միասին սուռճիկա տարում դուրս մղել մասնավոր կապիտալը մեծաքանակ առևտրից՝ լիովին և մանրավաճառից՝ հիմնականում: Այդ նպատակով կոնֆերանսը հարց է հարուցում պետական տնտեսական օրգանների առջև բարելավելու կոոպերատիվ միություններին ապրանքներ մատակարարելու գործը, ապահովելու նրանց լավորակ ապրանքներով, ելնելով բանվորագյուղացիական մասսաների կարիքներից: Կարգավորել կոոպերատիվների պետական վարկավորման գործը և իջեցնել տրվելիք վարկի տոկոսը¹⁸:

Առևտրի մեջ հաղթող կհանդիսանառ նա, ով ավելի էժան ու որակով ապրանքներ կվաճառեր: Ահա թե ինչու սպառկոոպերացիայի առջև խնդիր է դրվում պայքարել գների իջեցման համար, կոոպերատիվ խանութներում ապրանքների գները պետք է ավելի էժան լինեին, քան մասնավոր խանութներում: ՀԿԿ Երևանի կազմակերպության 6-րդ կոնֆերանսից անմիջապես հետո գավառի կուսակցական կազմակերպությունները պայքար ծավալեցին այդ ուղղությամբ: Անհրաժեշտ էր կրճատել կոոպերատիվների վերադիր ծախսերը, ավելորդ հաստիքները, ապարատը դարձնել ավելի ճկուն ու էժան: Իջեցնելով արդյունաբերական ապրանքների գները, պետությունը լայն հնարավորություններ էր ստեղծում կոոպերատիվ ապրանքաշրջանառության ծավալման համար: Պե-

15 ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ 4/1, գ. 354:

16 «Խորհրդային Հայաստան» թվերով, 1923—1927 թթ., վիճակագրական տեղեկատու, էջ 238:

17 Նույն տեղում:

18 Նույն տեղում:

19 «Խորհրդային Հայաստան», 1924, № 234:

տույններից ստանալով անհրաժեշտ արդյունաբերական ապրանքներ և դրամական վարկ, Երևանի գավառի սպառկոոպերացիան, սկսած 1924 թ. վերջից, կարողացավ առևտրի մեջ առաջադիմել, աստիճանաբար առևտրական ոլորտներից դուրս մղելով մասնավոր կապիտալը: 1925 թ. ընթացքում գավառի սպառկոոպերատիվ ցանցը այնքան հզորացավ, որ կարողացավ արդեն ադատորեն մրցել մասնավոր ձեռնարկությունների հետ, հանդես գալով առևտրի մեջ գների թելադրողի ու կարգավորողի դերում: Այս տեսակետից բնորոշ է Ախտալի սպառկոոպերացիայի օրինակը՝ ն. Ախտալի սպառկոոպերատիվներում 1 ֆունտ նավթի արժեքն էր 5 կոպեկ, իսկ մասնավոր խանութում՝ 7—8 կոպեկ: 1 ֆունտ շաքարը կոոպերատիվում արժեք 35 կոպեկ, իսկ մասնավորի մոտ՝ 38—40 կոպեկ, օճառը կոոպերատիվում արժեք 26 կոպեկ, իսկ մասնավոր խանութում՝ 30 կոպեկ և այլն²⁰:

Կոոպերատիվ առևտրի վիճակը ավելի նպաստավոր էր Երևանի շուկայում, որտեղ մասնավորների դեմ պայքարում էին մի շարք պետական առևտրական ձեռնարկություններ և գավառի ամենահզոր սպառկոոպերատիվը՝ բանկոոպը:

Ինչպիսի՞ն էր առևտրական ցանցը Երևանի գավառում վերականգնման ժամանակաշրջանի վերջում: Գավառում գործում էին ընդհանուր առմամբ 1122 առևտրական ձեռնարկություններ, որոնցից 31-ը՝ պետական, 117-ը՝ կոոպերատիվ և 974-ը՝ մասնավոր²¹: Բնականաբար, հարց է առաջանում. արդյոք մասնավոր խանութների թվական գերակշռությունը չէ՞ր ապահովում նրանց գերիշխող դերը առևտրում, ապրանքաշրջանառության մեջ: Իհարկե, ոչ: Պետական ու կոոպերատիվ ձեռնարկությունները ավելի հզոր ու խոշոր էին և կարողանում էին ազատորեն մրցել մասնավոր առևտրական ձեռնարկությունների հետ: Ըստ վիճակագրական վարչության տվյալների, 1925—26 թթ. առևտրական տարվա առաջին կիսամյակում Երևանի մեծաքանակ և մեծաքանակ-մանրավաճառ առևտուրը ամբողջությամբ կատարվել է պետական ու կոոպերատիվ ձեռնարկությունների միջոցով, իսկ մանրավաճառում՝ նրանց բաժինը կազմել է ավելի քան 50 տոկոս²²:

Առաջադիմելով առևտրի մեջ, կոոպերատիվները դառնում են ավելի մասսայական կազմակերպություններ: 1925 թ. հոկտեմբերին ամբողջ գավառի սպառկոոպերատիվ ցանցում անդամագրվածների ընդհանուր թիվը հասավ 14482 հոգու, որից 7630-ը ընդգրկված էին գյուղական կոոպերատիվներում²³: Եթե յուրաքանչյուր փայտիորջ համարենք մեկ տնտեսության ներկայացուցիչ, ապա կստացվի, որ 1925 թ. վերջում սպառկոոպերատիվ ցանցում ընդգրկված են եղել գավառի 26288 գյուղացիական տնտեսությունների²⁴ ավելի քան 29 տոկոսը: Այս տեսակետից ավելի բարվոք էր վիճակը Երևանի բանկոոպում: 1925 թ. սկզբներին Երևան քաղաքի բանվորության 91,7 տոկոսը ընդգրկված էր բանվորական սպառկոոպերացիայում²⁵: Վերականգնման ժամանակաշրջանի վերջում խոշոր չափով ավելացան նաև գավառի սպառողական

20 «Խորհրդային Հայաստան», 1925, № 19:

21 «Խորհրդային Հայաստան» թվերով, 1923—27 թթ., վիճակագրական տեղեկատու, էջ 227:

22 Նույն տեղում, էջ 229:

23 Նույն տեղում, էջ 235:

24 «Խորհրդային Հայաստանի հինգ տարին, 1920—25 թթ.», էջ 274:

25 «Խորհրդային Հայաստան», 1925, № 57:

կոոպերատիվների սեփական միջոցները: Եթե 1924 թ. այն կազմել է ընդամենը 39300 ռուբլի²⁶, ապա 1925 թ. վերջում սպառկոոպերատիվների սեփական միջոցները աճեցին մոտ շորս անգամ, հասնելով 114.600 ռուբլու²⁷:

Այսպիսով, ՀԿԿ Երևանի կազմակերպությունը ղեկավարվելով կուսակցության 12 և 13-րդ համագումարների որոշումներով, վերականգնման տարիններին հաջողությամբ պայքարում է սպառողական կոոպերացիայի ցանցի ընդլայնման, կոոպերատիվների առևտրական գործունեության ծավալման ուղղությամբ: Գավառի սպառողական կոոպերացիան, պայքարելով մասնավոր առևտրի դեմ, վերականգնման ժամանակաշրջանի վերջում դուրս է մղում մասնավոր կապիտալը մեծաքանակ առևտրից՝ լիովին և մանրածախից՝ հիմնականում:

Ինչո՞վ բացատրել կոոպերատիվ առևտրի հաղթանակը մասնավոր ձեռնարկությունների նկատմամբ: Նախ նրանով, որ 1924 թ. սկսած պետությունը կարգավորում է գյուղատնտեսական ու արդյունաբերական ապրանքների գների աննորմալ փոխհարաբերությունը: Եթե 1923 թ. գյուղացին սովորական «Գենի» կոշվող գութան ձեռք բերելու համար վաճառում էր 80 փութ ցորեն, ապա 1924 թ. կեսերին նույն գութանը գյուղացին ձեռք էր բերում 30 փութ ցորենով²⁸:

Երկրորդ՝ եթե մինչև 1923 թ. վերջերը առևտրական խոշոր բաղաները, պետական որոշ գործարանները իրենց ապրանքների ու արտադրության խոշոր մասը վաճառում էին մասնավոր ձեռնարկատերերին, ապա 1924 թ. սկսած պատկերը աստիճանաբար փոխվում է: Այսպես, օրինակ, եթե տեքստիլ սինդիկատի Երևանի գործակալությունը 1923 թ. հոկտեմբերին մասնավոր առևտրականներին է վաճառել իր ապրանքների 90,4 տոկոսը, կոոպերատիվներին՝ 6,1 տոկոսը, պետական հիմնարկներին՝ 3,5 տոկոսը, ապա 1924 թ. օգոստոսին գործակալությունը կոոպերացիային է վաճառում իր ապրանքների 98 տոկոսը, պետական հիմնարկներին՝ 3,75 տոկոսը և միայն 4,7 տոկոսը վաճառվում է մասնավոր առևտրականներին²⁹: Երևանի կաշվի գործարանը 1923 թ. հոկտեմբերին մասնավոր առևտրականներին է վաճառում իր արտադրանքի 73,36 տոկոսը, իսկ մնացած մասը պետական մարմիններին ու կոոպերատիվ կազմակերպություններին: 1924 թ. սեպտեմբերին կաշվի արտադրության կեսից ավելին գնվում է կոոպերատիվ և պետական կազմակերպությունների կողմից³⁰:

Եվ վերջապես, կոոպերատիվ շինարարության մեջ կուսակցությունը առաջին պլանի վրա էր դրել կոոպերատիվ ապրանքաշրջանառության կազմակերպման ու ծավալման խնդիրները: Սրանք էին այն գլխավոր պայմանները, որոնց շնորհիվ ապահովվեց կոոպերատիվ և պետական ապրանքաշրջանառության հաղթանակը մասնավոր առևտրի նկատմամբ:

Եթե սպառկոոպերացիան կոշված էր պայքարելու մասնավոր կապիտալի դեմ առևտրի ճակատում, ապա գյուղատնտեսական արտադրական կոոպերացիայի խնդիրն էր պայքարել մասնավոր կապիտալի դեմ՝ արտադրության ճակատում:

26 «Խորհրդային Հայաստանի թվերով, 1927 — 27 թթ.», Վինակագրական տեղեկատու, էջ 238:

27 Նույն տեղում:

28 «Գյուղատնտեսական կյանք», 1924, № 2—3, էջ 24:

29 «Экономический вестник Армении», 1925, № 1(9), стр. 122.

30 Կ. Պ. Կարազյան. Սպառողական կոոպերացիայի ծագումը և զարգացումը Հայաստանում, 1957, էջ 262:

Գյուղատնտեսական արտադրական կոոպերացիայի ամենատարածված ձևը նախասովետական Հայաստանում մանր վարկային կոոպերացիան էր, որի առաջնեկը ծնունդ առավ Լոռու շրջանի Վորոնցովկա գյուղում 1897 թ.։ Հետագայում նման վարկային ընկերություններ կազմակերպվեցին նաև Հայաստանի մի շարք գավառներում։

1915 թ. սեպտեմբերին ամբողջ Երևանի նահանգում գործում էին 62 վարկային կոոպերացիոն ընկերություններ, որոնցում ընդգրկված էին 28440 անդամներ³¹։ Կոոպերատիվների ընդհանուր դրամագլուխը կազմում էր երկու միլիոն 441200 ռուբլի³²։ Եթե ամբողջ Անդրկովկասում վարկային կոոպերատիվների միջին դրամագլուխը կազմում էր 21800 ռուբլի, ապա Երևանի նահանգում այն հասնում էր 39400 ռ.³³։ Բարձր էր նաև մեկ անդամին հասանելիք դրամի քանակը։ Եթե Անդրկովկասի վարկային կոոպերացիայի յուրաքանչյուր անդամին հասանելիք միջին դրամագլուխը կազմում էր 60,3 ռուբլի, ապա Երևանի նահանգում այն կազմում էր 85,9 ռուբլի³⁴։

Երևանի նահանգի վարկային կոոպերացիան իր դրամական միջոցներով ամբողջ Անդրկովկասում գրավում էր երկրորդ տեղը, իսկ մեկ կոոպերատիվին և մեկ անդամին ընկնող դրամագլխի ընդհանուր քանակով առաջին տեղը։

Վերահաս պատերազմը և նրան հաջորդած ընդհանուր տնտեսական անկումը քայքայման հասցրին վարկային ու գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվները ողջ Հայաստանում, և Սովետական Հայաստանին ժառանգություն մնաց գյուղատնտեսական-արտադրական կոոպերացիայի անցյալի պատմությունը ու նրա լուկ գաղափարը։

Պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում արմատապես փոխվեցին նաև արտադրական կոոպերացիայի բնույթն ու խնդիրները։

Նոր տնտեսական քաղաքականության առաջին շրջանում գյուղատնտեսական-արտադրական կոոպերացիայի գլխավոր խնդիրն էր նպաստել գյուղացիական մասնավոր տնտեսությունների վերականգնմանն ու զարգացմանը և պրանով իսկ բարենպաստ պայմաններ ստեղծել այդ տնտեսությունները սոցիալիստական վերակառուցման ուղիով տանելու համար։ Փոշիացած գյուղացիական տնտեսությունների երթը դեպի քաղաքակիրթ կոոպերատորների հասարակարգը անցնում է գյուղատնտեսական-արտադրական կոոպերացիայի վրայով։ Ահա թե ինչու վերականգնման շրջանի հենց սկզբից արտադրական կոոպերացիայի կազմակերպման խնդիրը դարձավ ևկոստակցական կազմակերպությունների հիմնական խնդիրներից մեկը։ Այդ աշխատանքներին ՀԿԿ Երևանի կազմակերպությունը ձեռնամուխ եղավ 1922 թ. վերջերին։ Արտադրական կոոպերացիայի ամենատարածված ձևը վերականգնման շրջանում վարկային կոոպերացիան էր։

1923 թ. ընթացքում Երևանի գավառում կազմակերպվում են երեք վարկային ընկերություններ, որոնցում ընդգրկվում են 645 գյուղացիական տնտեսություններ։ Ընդ որում, եթե 1923 թ. վերջում ամբողջ հանրապետության գյու-

31 «Խորհրդային Հայաստանի հինգ տարին, 1920—25 թթ.», էջ 266։

32 «Закавказская кооперация», 1923, № 1—2.

33 Նույն տեղում։

34 Նույն տեղում։

դացիական տնտեսությունների 0,97 տոկոսն է կոոպերացված, ապա Երևանի գավառում այն հասնում է 2,61 տոկոսի³⁵։

Գյուղատնտեսական արտադրական կոոպերացիայի ցանցի նեղ լինելուց ավելի շատ տուժում էին չքավոր ու միջակ գյուղացիական տնտեսությունները. Եթե գյուղի ունևոր տարրերը ի վիճակի էին մշակելու իրենց հողերը, այգիները, վերականգնելու իրենց տնտեսությունը, ապա արտադրամիջոցներից զուրկ գյուղացիությունը ի վիճակի չէր այդ անելու։ Ահա թե ինչու 1921—22 թթ. ընթացքում գյուղում չքավորները ի մի էն գումարում իրենց սուղ արտադրամիջոցները, կազմում կոմունաներ և համայնական ձևով մշակում իրենց դաշտերը։ 1921—22 թթ. բազմաթիվ կոմունաներ և կազմակերպվում նաև Երևանի գավառում, օրինակ, Կոտայքի շրջանի Եղոժվան, Բաշ գյուղ, Թազա գյուղ, Շահար, Բաշ Գառնի, Ծաթղուան և Գողթ գյուղերում³⁶, ինչպես նաև գավառի Հրազդան, Ախտա, Ղամարլու, Բաշ Գառնի շրջաններին³⁷ մի շարք գյուղերում։

Կոմունան, որպես արտադրական կոոպերացիայի ձև, զուտ սոցիալիստական հասարակարգի ծնունդ է։

Ի՞նչ սկզբունքով էր կատարվում աշխատանքն ու մթերքների բաշխումը կոմունաներում։ Վերցնենք Ղամարլուի շրջանի Օղորբեզլու գյուղի «Հոգս» կոմունայի օրինակը։ «Խորհրդային Հայաստան» թերթը այս կոմունայի մասին գրում է. «Ընկերության հիմնադիրները... գալիս են այն եզրակացության, որ իրենցից ոչ ոք առանձին-առանձին իր փոքր հողաբաժնով, աղքատ շնչավոր ու անշունչ ինվենտարով չի կարող ուժեղացնել ու բարձրացնել իր տնտեսությունը, ուստի նրանք միացնում են իրենց արտադրամիջոցները և սկսում աշխատել միասնական ուժով, շուտով նրանց են միանում նաև այլ տնտեսություններ ու կազմում կոմունա։ Կոմունայի անդամները առաջին իսկ օրվանից մի պահեստի մեջ են հավաքում իրենց ունեցած բոլոր մթերքները։ Բաց են անում փուռ ու ճաշարան և կանոնավոր կերպով բաց թողնում ընկերության անդամներին հաց, ճաշ, մթերք՝ սահմանված նորմայով։

Ընկերության հողերից (7 դեսյատին խաղողի այգի և 5 դեսյատին վարելահող) ստացած ամբողջ բերքը հավաքվում է ընդհանուր պահեստ, որտեղից արդեն ըստ պահանջի տրվում է ընտանիքներին»³⁸։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, «Հոգս» կոմունայում գործում է աշխատանքի ու բաշխման կոմունիստական սկզբունքը։ Նույն սկզբունքով են ղեկավարվում նաև գավառի մյուս կոմունաները։

Սակայն գյուղատնտեսական կոմունաները արտադրողական ուժերի ցածր զարգացման պայմաններում չդարձան և չէին կարող դառնալ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ուղի. այդ պատճառով էլ նրանք կարճ ժամանակ գոյություն ունենալուց հետո վերացվեցին։ Նրանք չէին կարող հարատևել, որովհետև անցման շրջանում սոցիալիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծմանը խթանող ուժը ոչ թե բաշխման կոմունիստական եղանակն էր, այլ սոցիալիստականը։

Իսկ ի՞նչ սկզբունքով է կառուցված գյուղատնտեսական-արտադրական կոոպերացիան։ Վերցնենք նույն շրջանի «Ինտերնացիոնալ» վարկային ընկե-

35 «Խորհրդային Հայաստան» թվերով. 1920—1925 թթ., էջ 269։

36 Մի շրջանի ֆիլիալի արխիվ. ֆ. 4/1, գ. 84, թ. 4։

37 Նույն տեղում, գ. 206, թ. 2։

38 «Խորհրդային Հայաստան», 1924, № 196։

րության օրինակը՝ Դամասուսի շրջանի «Ինտերնացիոնալ» վարկային ռեկերու-
թյունը կազմակերպվում է 1923 թ. գարնանը։ Երկու տարվա ընթացքում ըն-
կերությանը անդամագրվում են 1037 գյուղացիական տնտեսություններ, որոնք
կազմում են շրջանի ամբողջ տնտեսությունների 20 տոկոսը։ Ընկերության ան-
դամները իրենց սոցիալական դրությամբ գլխավորապես չքավոր ու միջակ
տնտեսություններ էին։

Ընկերության շրջանառու բյուջեն առ 1-ր հունիսի 1925 թ. կազմել է
173.665 ռ. 26 կ., որից 59—736 ռ. 54 կ. տրվել է տնտեսություններին փոխա-
տրվության կարգով։ Տրված վարկով գյուղացիական տնտեսությունները գնել են
լծկաններ, գութաններ, դանազան գյուղգործիքներ, ագրոգեղանյութեր և այլն³⁹։

Ընկերությունը կատարել է նաև գյուղատնտեսական մթերքների վերա-
մշակման ու պահպանման համար անհրաժեշտ շինությունների կառուցման ու
անհրաժեշտ ինվենտարի հայթայթման աշխատանքներ։ Կազմակերպել է նաև
առանձին արհեստանոց՝ գյուղատնտեսական գործիքների վերանորոգման հա-
մար։

Արտադրական կոոպերացիայի այս ձևում արտադրության հիմնական մի-
ջոցները չեն համայնացվում։ Վարկային ռեկերության յուրաքանչյուր անդամ
հանդես է գալիս որպես մասնավոր տնտեսատեր և, բնականաբար, առաջին
հերթին շահագրգռված է բարձրացնելու իր տնտեսությունը, այն առավել եկա-
մրտաբեր դարձնելու համար։ Բայց միայնակ այդ անել նա չէր կարող և օգ-
նության կարիք էր զգում։ Օգնությունը նա կարող էր ստանալ երկու ձևով.
մեկը՝ պետության կողմից տրվող վարկերի միջոցով (պետական միջոցներ),
մյուսը՝ առանձին տնտեսությունների սեփական որոշ արտադրամիջոցների հա-
մախմբման և դրանք կուլեկտիվ կերպով օգտագործելու միջոցով (կոոպերատիվ
միջոցներ)։ Յուրաքանչյուր կոոպերատիվի հզորության չափանիշը որոշվում
էր վերջին՝ կոոպերատիվ միջոցների չափով։

Ինչքանով որ մեծանում էր կոոպերատիվ միջոցների չափը, նույնքանով
էլ ընդլայնվում էր տվյալ կոոպերատիվում կոոպերատիվ արտադրամիջոցների
և կուլեկտիվ աշխատանքների ոլորտը և այդ տեղեկները հանգեցնում է այն բա-
նին, որ ի վերջո համայնացվում են աշխատանքի ամենահիմնական ոլորտները,
սամենահիմնական արտադրամիջոցները, պահպանելով յուրաքանչյուրից ըստ
իր ընդունակությունների և յուրաքանչյուրին ըստ իր աշխատանքի բաշխման
սկզբունքը։

Արտադրական վարկային կոոպերացիան քաղաքակիրթ կոոպերատորների
հասարակարգը տանող այն միջանկյալ օղակն է, այն միջանկյալ «դասըն-
թացը», որտեղ մանր արտադրողը, հատկապես գյուղի արտադրողը կուլեկտիվ
աշխատանքի ունակություններ էր ձեռք բերում, առանց որի նրա համար ան-
հասկանալի կլիներ արտադրական կոոպերացիայի այնպիսի բարձր ու զար-
դացած ձևը, ինչպիսին կուլտնտեսությունն է։

Այսպիսով, գյուղացիական տնտեսությունների կոոպերացման ամենա-
նպատակահարմար և ամենակենսունակ ձևը վերականգնման տարիներին ար-
տադրական վարկային կոոպերատիվներն էին, որոնց վրա էլ բեռնեցին իրենց
ուշադրությունը կուսակցությունն ու կառավարությունը։ Պետության ֆինանսա-
կան օժանդակությունը հիմնականում ուղղվեց դեպի այդ կոոպերատիվները։

³⁹ «Խորհրդային Հայաստան», 1925, № 187։

Հայաստանի գյուղատնտեսական արտադրական կոոպերացիայի ձեռք բերած նվաճումները պայմաններ ստեղծեցին ոչ միայն նրա հետագա ծավալման ու զարգացման համար, այլև անհրաժեշտություն դարձրին գյուղկոոպերացիան անջատել միասնական կոոպերացիայի ցանցից: 1924 թ. սեպտեմբերին Երեվանում գումարվեց Հայաստանի գյուղատնտեսական կոոպերատիվների լիազորների հիմնադիր համագումարը, որտեղ և կազմակերպչորեն ձևավորվեց ալգյուղկոոպերացիան իր առանձին վարչություն: 1924 թվականը իրավամբ կարելի է համարել գյուղկոոպերացիայի բուռն վերելքի տարի: Դրանում մեծ դեր կատարեց կուսակցության 13-րդ համագումարի որոշումը կոոպերացիայի մասին, որի կենսագործումը նոր հեռանկարներ էր բացում արտադրական կոոպերացիայի հետագա զարգացման ու ծավալման համար:

1924 թ. զգալիորեն ընդարձակվում է գյուղատնտեսական-արտադրական կոոպերացիայի ցանցը Երևանի գավառում: Եթե 1923 թ. վերջում կոոպերացված էր ամբողջ գավառի գյուղացիական տնտեսությունների 2,61 տոկոսը, ապա մեկ տարի հետո, 1924 թ. վերջում կոոպերացված տնտեսությունների թիվը աճում է մոտ շորս անգամ, հասնելով 8,52 տոկոսի: 1923 թ. գավառում գործում էին ընդամենը երեք վարկային ընկերություններ, իսկ 1924 թ. վերջում գյուղատնտեսական կոոպերատիվների ընդհանուր թիվը Երևանի գավառում հասավ 13-ի⁴⁰:

Կուրս վերցնելով դեպի արտադրական կոոպերատիվների մասնագիտացումը, գավառի կուսակցական կազմակերպությունները 1924 թ. ընթացքում զարկ տվեցին մասնագիտական կոոպերատիվների կազմակերպման աշխատանքներին: 1923 թ. գավառում գործում էին միայն վարկային ընկերություններ, իսկ 1924 թ. վերջում նրանց կողքին սկսում են գործել շորս խառը գյուղատնտեսական-արտադրական, մեկ մեղվաբուծական և շորս ալգեգործական կոոպերատիվներ⁴¹:

1924 թ. ընթացքում գյուղատնտեսական-արտադրական կոոպերացիայի զարգացման ուղղությամբ ՀԿԿ Երևանի կազմակերպության կատարած աշխատանքներն ու ձեռք բերած նվաճումները հանրագումարի են բերվում կազմակերպության 6-րդ կոնֆերանսում: Կոնֆերանսը հանրագումարի բերելով գյուղացիական տնտեսությունների կոոպերացման բնադավառում ձեռք բերած հաջողությունները, միաժամանակ նշեց, որ աչքաթող է արվել մի կարևոր հանգամանք՝ անհրաժեշտ ուղադրություն չի դարձվել կոոպերատիվների սոցիալական կազմին: Բանն այն էր, որ 1924 թ. ղյուղում կուլակային տարրերը տնտեսապես բավական հզորանալով, ամեն ջանք գործադրում էին թափանցելու պետական օրգանները, հասարակական այս կամ այն կազմակերպությունները: Ընդ որում, նրանք առաջին հերթին ձգտում էին մտնել իրենց համար առավել մատչելի կոոպերատիվ ընկերությունները:

Պետության կողմից տրվող վարկերը, որ նախատեսված էին շրավոր ու միջակ գյուղացիական տնտեսությունների համար, երբեմն չէին ծառայում իրենց նպատակին: Կուլակային տարրերը այն վատնում էին, վարկավորում

40 ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4/1, գ. 354 թ. 141, նշված աղբյուրում թույլ են տրվել ուռանձին, բայց ոչ էական թվական սխալներ, որոնք ճշտված են: Տե՛ս «Խորհրդային Հայաստանի հինգ տարին. 1920—25 թթ.», էջ 270:

41 Նույն տեղում, ֆ. 4/1, գ. 354, թ. 141:

հարուստներին և այսպիսով վարկաբեկում կոոպերատիվի գաղափարը աշխատավորական մասնաների աչքում: Ավելին. կուլակները իրենց մերձավորների ու բարեկամների հետ միանալով, կազմում էին ձևական կոմունաներ, արտելներ, օգտվում պետական հովանավորությունից ու քողարկում իրենց իսկական դեմքը:

Կոնֆերանսը հանձնարարեց ՀԿԿ Երևանի կոմիտեին, սկզբնական կուսակցական կազմակերպություններին աշալուրջ հետևել, որպեսզի կուլակային տարրերը չթափանցեն կոոպերատիվների մեջ և այն շղարձեն իրենց համար շահատակության վայր: Կոոպերատիվները, նշված է որոշման մեջ, պետք է հանդիսանան չքավոր ու միջակ տնտեսությունների տնտեսական դաշինքի լավագույն միջոցը, հետևաբար նրա սոցիալական կողմի ճիշտ ընտրությունը կուսակցական կազմակերպությունների հիմնական խնդիրն է⁴²:

Կոոպերատիվներում կուսակցական ղեկավարությունն ու հսկողությունն ուժեղացնելու նպատակով, Կոնֆերանսը հանձնարարեց գավառի բոլոր կոմունիստներին առաջիկայում անդամագրվել կոոպերատիվ ընկերություններում, կոոպերատիվ աշխատանքի ուղարկել գործիմաց աշխատողներին: Կոնֆերանսը հանձնարարեց ՀԿԿ Երևանի կոմիտեին շարունակել պայքարը մասնագիտացված կոոպերատիվների համար, ընդլայնելով նրանց ցանցը Երևանի գավառում⁴³:

Գյուղատնտեսական-արտադրական կոոպերացիայի տնտեսական ու կազմակերպչական ամրապնդման ու զարգացման հարցերին ՀԿԿ Երևանի կոմիտեն անդրադարձավ նաև գավառային կազմակերպության երկրորդ պլենումում, որը տեղի ունեցավ 1925 թ. հունվարին: Պլենումը ընդհանրացնելով արտադրական կոոպերացիայի բնագավառում կուսակցական կազմակերպությունների աշխատանքների փորձը և մատնանշելով այդ գործում նկատված թերությունները, սկզբնական կուսակցական կազմակերպությունների առջև խնդիր դրեց լիովին զտել ու մաքրել գյուղկոոպերացիան սոցիալապես անհարազատ տարրերից, հսկել, որպեսզի գյուղացիությանը արվելիք վարկը ծառայի իր նպատակին, այն հասնի չքավոր ու միջակ գյուղացիությանը, նպաստի նրանց տնտեսությունների բարձրացմանը: Գյուղկոոպերացիայի ֆինանսական դրությունը բարելավելու նպատակով, պլենումը անհրաժեշտ համարեց կոոպերատորների համաձայնությամբ բարձրացնել փայավճարների չափը և այն գանձել բոլորից 100 տոկոսով: Ինչ վերաբերվում է չքավորներից գանձվող փայավճարների չափին, ապա պլենումը նպատակահարմար գտավ այն իջեցնել և հանձնարարել գյուղական փոխադարձ օգնության կոմիտեներին՝ ՓՕԿ-երին, անդամագրելու չքավորներին կոոպերատիվներում, մուծելով նրանց և՛ փայավճարները, և՛ մուտքի վճարները: Պլենումը կոոպերատիվ ընկերությունների առաջնահերթ խնդիրներից մեկը համարեց կոոպերատիվների սեփական միջոցների՝ կոոպերատիվ ֆոնդի ընդլայնումը, սակայն հաշվի առնելով, որ առաջիկայում գավառի կոոպերատիվները դեռևս ի վիճակի չեն լինի իրենց միջոցներով բավարարել գյուղացիական տնտեսությունների արտադրական պահանջները, հարց հարուցեց համապատասխան կազմակերպությունների առջև

42 «Խորհրդային Հայաստան», 1924, № 234:

43 Նույն տեղում:

մեծացնելու կոոպերատիվներին տրվելիք պետական վարկի չափը՝ վարկավորման գործի կարգավորումը առաջնահերթ համարելով, պլենումը անհրաժեշտ գտավ կոոպերացված գյուղացիական տնտեսությունների վարկավորումը բացառապես կատարել գյուղավարկային ընկերությունների միջոցով, այն հարմարեցնելով վար ու ցանքի և բերքահավաքի ժամկետների հետ։

Պլենումի որոշմամբ հանձնարարվեց կուսակցության Երևանի կոմիտեի նախագահությանը դավառի բոլոր շրջանային կենտրոններում կազմակերպել գյուղավարկային կոոպերատիվներ։ Պլենումը պարտավորեցրեց կուսակցական կազմակերպություններին հսկել, որպեսզի վարկային կոոպերատիվները չշեղվեն իրենց հիմնական ֆունկցիաներից և չտարվեն առևտրական գործարքներով⁴⁴։

1925 թ. ընթացքում դավառի գյուղատնտեսական-արտադրական կոոպերացիան նոր վերելք ապրեց, դարգանալով ոչ միայն լայնությամբ, այլ գլխավորապես խորությամբ։ Դա բացատրվում է նրանով, որ դավառի կուսակցական կազմակերպությունները ավելի մոտիկից սկսեցին զբաղվել կոոպերատիվ շինարարության հարցերով, կուսակցական աշխատանքների ծանրության կենտրոնը տեղափոխեցին այդ բնագավառը։ Սկսած 1925 թ. դավառի շրջանային կուսակցական կազմակերպությունները սիստեմատիկաբար ընդհանուր ժողովներում, պլենումներում քննարկում են իրենց ենթակայության տակ գտնվող կոոպերատիվ վարչությունների հաշվետվությունները, կոնկրետ ու գործնական օգնություն են ցույց տալիս նրանց։

1925 թ. կոոպերատիվ շինարարության բնագավառը բնորոշ է նաև նրանով, որ այդ գործին մասնակից են դառնում աշխատավորական լայն մասսաները։ Կուսակցական կազմակերպություններից բացի, կոոպերատիվ շինարարությամբ սկսում են զբաղվել նաև հասարակական կազմակերպությունները։ Հայաստանի գյուղատնտեսական-արտադրական կոոպերացիայի երկարամյա փորձը աշխատավոր գյուղացիությանը բերում է այն հաստատ համոզման, որ իրենց տնտեսությունների բարձրացման առաջին գրավականը կոոպերատիվ աշխատանքն է։ Կոոպերատիվ շինարարությամբ շահագրգռվում է հենց ինքը՝ գյուղացին։ Ահա թե ինչու, սկսած 1925 թ. դարնանից, կոոպերատիվ շինարարության խնդիրները դառնում են կուսակցական գյուղացիական համագումարների լայն քննարկման առարկա։

1925 թ. ապրիլ-մայիս ամիսներին Վեդի Բասարում, Քանաքեռում, Հրազդանում, Բաշ Գառնիում, Ն. Ախտայում և Ղամարլուում տեղի են ունենում շրջանային գյուղացիական կուսակցական համագումարներ⁴⁵։ Ամենուրեք գյուղացիությունը ողջունում է կուսակցության «ու սովետական կառավարության ձեռնարկումները կոոպերատիվ շինարարության բնագավառում։

Որոշնք էին այն բնագծերը, որ նվաճեցին Երևանի դավառի կուսակցական կազմակերպությունները գյուղատնտեսական-արտադրական կոոպերացիայի նախագավառում 1925 թ. վերջում։ Ստորև բերվող աղյուսակը պատասխան է տալիս այդ հարցին։

⁴⁴ ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4/1, գ. 527, թ. 3։

⁴⁵ ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4/1, գ. 561, թ. 1, 3, 6, 9, 14, 17, 18։

Արտադրական գյուղատնտեսական կոոպերացիայի ցանցը Երևանի գավառում
առ 1-ը հոկտեմբերի 1925 թ.

Կոոպերատիվների սիսիվ	Կապիտալի կապ	Գույքի արժեք	Սեզոնային գյուղատնտեսական կոոպերացիաներ	Այլ գործակալներ	Մեղակալներ	Համագործակցող կապեր	Միջակայք	Գյուղատնտեսության արտադրանքների թիվը	Կոոպերատիվների արտադրական տոկոս
Միավորների թիվը	1	6	6	6	1	2	22		
Որոշյալ ընդգրկված տնտեսությունների թիվը	27	3640	175	375	34	183	4434	26288	16,81 տոկոս

Համեմատելով 1924 թ. հետ, նկատում ենք, որ գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվների թիվը 1925 թ. ավելացել է 9-ով, 13-ից հասնելով 22-ի: Ավելի քան կրկնակի անգամ աճել է գյուղացիական տնտեսությունների կոոպերացման տոկոսը: Եթե 1924 թ. վերջում կոոպերացված էր դավառի գյուղացիական տնտեսությունների 8,52 տոկոսը, ապա վերականգնման ժամանակաշրջանի վերջում այն հասնում է արդեն 16,81 տոկոսի:

1925 թ. ընթացքում զգալիորեն մեծանում են կոոպերատիվների սեփական միջոցները, ընդարձակվում են արտադրության կոոպերացման ոլորտները: Եթե 1924 թ. դավառի բոլոր գյուղատնտեսական կոոպերատիվների կոոպերատիվ միջոցները չէին ասեցնում 21000 ռուբլուց, ապա 1925 թ. դրանք հասնում են արդեն 67000 ռուբլու⁴⁷: 1925 թ. ընթացքում գյուղատնտեսական բանկի կողմից գավառի բոլոր գյուղակոոպերատիվներին բաց է թողնվում 270000 ռուբլու վարկ, որը բաժանվում է 3582 չքավոր ու միջակ գյուղացիական կոոպերացված տնտեսությունների միջև⁴⁸:

1921—25 թթ. ընթացքում գավառի գյուղացիական տնտեսությունների 16,81 տոկոսը ընդգրկվում է արտադրական կոոպերատիվներում, իսկ սպառկոոպերացիայում՝ քաղաքի բանվորության մոտ 100 տոկոսը և գյուղացիական տնտեսությունների 29 տոկոսը:

Ահա սրանք էին այն հաջողությունները, որ նվաճվեցին կուսակցության Երևանի կազմակերպությունների կողմից սպառողական և գյուղատնտեսական-արտադրական կոոպերացիայի բնագավառում, ուղեցույց ունենալով լենինյան կոոպերատիվ սլոանը:

46 «Խորհրդային Հայաստանի հինգ տարին, 1920—25 թթ.», էջ 274:

47 ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4/1, գ. 526, թ. 86—87:

48 «Խորհրդային Հայաստան», 1925, № 264:

А. П. МКРТЧЯН

КООПЕРАТИВНОЕ СТРОИТЕЛЬСТВО В ЕРЕВАНСКОМ
УЕЗДЕ (1921--1925 гг.)

Р е з ю м е

Ереванская уездная партийная организация КП Армении после победы Советской власти в Армении вела активную борьбу за претворение в жизнь ленинского кооперативного плана. В указанный период в уезде развивается потребительская кооперация, которая успешно ведет борьбу против частной торговли. В результате этого в конце восстановительного периода потребительская кооперация уезда полностью вытесняет частный капитал из сферы оптовой торговли; в основном он вытесняется также из сферы розничной торговли.

Партийная организация уезда в своей деятельности важное внимание уделяет также и развитию производственной кооперации, как основному пути социалистического преобразования мелких крестьянских хозяйств. В конце восстановительного периода более чем 16.81 процентов крестьянских хозяйств уезда было вовлечено в сети производственной кооперации. Особое развитие получает кредитная кооперация, что, с одной стороны, помогает восстановлению хозяйств бедняков и середняков, а с другой стороны, вместе с другими видами производственной кооперации,—подготавливает почву для перехода к более высшей форме производственной кооперации — коллективному хозяйству.